ԳԻՐՔԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ԱՌՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՎԻԼՀԵՄ ԲԱՈՒՄ

Թուրքիան եւ նրա քրիստոնյա փոքրամասնությունները. հայացք Եւրոպայից (Անցյալը-ցեղասպանությունները-ներկան), գերմաներենից թարգմ. Դորա Սաքայան եւ Էվելինա Մակարյան, Երեւան, 2010:

Վերջերս Երեւանի Պետական համալսարանի հրատարկչությունը լույս է ընծայել ավստրիացի արեւելագետ, պատմագիտության եւ աստվածաբանության դոկտոր Վիլհելմ Բաումի «Թուրքիան եւ նրա քրիստոնյա փոքրամասնությունները» ուսումնասիրությունը: Հեղինակն իր գրքի գերմաներեն բնագիրը առաջին անգամ հրատարակել է 2005թ. Ավստրիայում, Քլագենֆուրտ քաղաքում, իր իսկ հիմնադրած Քիթաբ հրատարակչությունում: 2006թ. ուսումնասիրությունը հրատարակվել է նաեւ անգլերեն:

Գրքից առանձին հատվածներ տպագրվել են «Էջմիածին» ամսագրում (2009թ. թիվ ԺԲ, էջ 98-104, 2010 թ. թիվ Գ, էջ 136-140): Վ. Բաումը 2007թ. նույն հրատատարակչությունում տպագրեց իր երկրորդ ուսումնասիրությունը՝ «Die christlichen Minderheiten der Tyrkei in den Pariser Friedens ver handlungen -1919-1923-. Kemal Ataturk und der Genocid», -Kitab- Vienna, 2007, 310 էջ (Վիլհելմ Բաում «Թուրքիայի քրիստոնեական փոքրամասնությունները խաղաղության փարիզյան կոնֆերանսի ժամանակ. Քեմալ Աթաթուրքը եւ ցեղասպանությունը (1919-1923թթ.):

Վ. Բաումը տարիներ շարունակ շրջագայել է Թուրքիայում, ինչպես նաեւ Հայաստանում ու Վրաստանում, մոտիկից ծանոթացել է այս երկրների ժողովուրդների նիստ ու կացին, մտածողությանը, ավանդություններին: Նա օգտագործած պատմագիտական նյութը շարադրել է այսօրվա Թուրքիայից ստացած իր կենդանի տպավորությունների հետ համադրած, մի հանգամանք, որից գիրքը մեծապես շահել է:

Ինչպես հայտնի է, Թուրքիան տասնամյակներ շարունակ լայն ճակատով պայքարում է եւ հավակնում է լիիրավ մաս կազմելու Եւրամիության: Թուրքերը Փոքր Ասիան եւ Մերձավոր Արեւելքի շատ երկներ գրավելուց եւ Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը ոտնատակ տալուց հետո ԺԷ դարի վերջին վճռեցին, որ իրենց առջեւ Արեւմտյան Եւրոպայի դարպասը բաց է, ամբողջ ուժով նետվեցին դեպի քրիստոնեական աշխարհի սիրտը՝ հասնելով Վիեննայի պարիսպներին: Սակայն այնտեղ ճաշակեցին եւրոպական զենքի սառը համը:

1683-1689 թթ. ավստրո-թուրքական պատերազմում թեեւ Թուրքիան ծանր պարտություն կրեց, սակայն շարունակեց շուրջ երկու դար տեր ու տնօրինություն անել Հարավարեւելյան Եւրոպայի մի շարք երկրներում:

Վ. Բաումը պատմագիտական նյութը, ժամանակի քաղաքական, հասարակական գործիչների, հոգեւորականների, ճանապարհորդների հաղորդած տեղեկությունները եւ բազում այլ աղբյուրների տվյալները շարադրելով ժամանակագրական համակարգված եղանակով, համոզիչ կերպով ցույց է տալիս,

որ Օսմանյան պետությունը իր ստեղծման պահից մինչեւ մեր օրերը վարել է գրված փարածքներում քրիստոնեական մշակույթը կործանելու եւ այդ մշակույթը կրողներին՝ հայերին, հույներին, ասորիներին իրենց բնօրրանում բնաջնջելու քաղաքականություն:

Եւրոպայում գրված փարածքների մեծ մասից Թուրքիայի դուրս մղվելուց հետո այսօր Եւրոպան դարձյալ մնում է թուրքական նկրտումների առարկա: Թուրքիան ներկայումս ձգտում է վերը նշված ծանր պատմական բեռով վերադառնալ Եւրոպա որպես իր իսկ կործանած բյուզանդական եւ հայկական մշակութային ժառանգության «իրավահաջորդը»: Պայքարում է իր պորտալարը դարձյալ կապելու քրիստոնյա Եւրոպային եւ այդ կերպ սնվելու արեւմտյան երկրների տնտեսության բարիքներից: Պատմության հեգնանք չէ՞, որ այսօր մուսուլմանական մոլեռանդ Թուրքիան ցանկանում է, Եւրամիություն մտնելով, նախկին քրիստոնեական Արեւելքը միավորել այսօրվա քրիստոնեական Արեւմուտքի հետ:

Վ. Բաումի գրքի ստեղծման շարժառիթը Թուրքիայի՝ Եւրամիությանը անդամակցելու խնդիրների շուրջն անցկացվող բանակցություններն են եւ այն բանավեճը, որը Եւրոպայում հարուցում է ԵՄ ընդարձակման հարցը:

Հարկ է նշել, որ հեղինակը բոլոր պատմական իրադարձությունները նկարագրում եւ վերլուծում է հիմնականում եւրոպական եւ թուրքական քաղաքական, հասարակական գործիչների, դիվանագետների, եկեղեցականների, մամուլի վկայությունների, պաշտոնական հաղորդումների, հայտարարությունների համապատկերի վրա: Դրանով ասես մի յուօրինակ երկխոսություն է ստեղծվում մի կողմից անցյալի եւրոպական գործիչների, մյուս կողմից այն եւրոպացի դիվանագետների միջեւ, որոնք այսօր տնօրինում են Եւրոպայի ճակատագիրը եւ որոնց հիմնականում հասցեագրված է Վ. Բաումի գիրքը: Այսպիսի գրականությունը շատ անհրաժեշտ է այդ գործիչների համար, որոնք ի պաշտոնե պարտավոր են իմանալ այն ամենը, ինչը այսօրվա Թուրքիան ուրանում եւ թաքցնում է Արեւմուտքից:

Գրքի խիստ փաստաբանված շարադրանքը ընթերցողին թույլ է տալիս ասես պատմության տեսաժապավենի վրա աչքի անցկացնել քրիստոնեական Արեւելքի մշակույթի, դրա կրողների՝ հայերի, հույների, ասորիների բնաջնջման ողջ ընթացքը՝ սկսած նրանց բնօրրանի գրավումից մինչեւ անցյալ դարի կեսերը՝ Կիպրոսի միջազգայնորեն ճանաչված անկախ, ինքնիշխան հանրապետության հյուսիսի գրավումը, եւ ինչու չէ՝ ներառյալ մինչեւ մեր օրերը, երբ ժամանակակից Թուրքիայի իշխանությունները, չճանաչելով քրիստոնյա փոքրամասնությունների բնաջնջման, մասնավորապես հայոց ցեղասպանության իրողությունը, փաստորեն օրինականացնում եւ արդարացնում են իրենց արնոտբերան նախնիների այդ եղերական քաղաքականությունը:

Պատմական սկզբնաղբյուրներով, վավերագրերով, Եւրոպայի գործիչների, ճանապարհորդների վկայություններով հագեցած այսպիսի ցանկացած ուսումնասիրություն, մանավանդ գրված ավստրիացի անկախ մի փորձագետի գրչով, ինչպիսին, անտարակույս, տվյալ դեպքում դոկտոր Վ. Բաումն է, մի յուրօրինակ հանրամատչելի ուղեցույց է եւրոպական դիվանագետների համար՝ ճիշտ կողնորոշվելու Թուրքիայի անցյալի մութ միջանցքներում եւ այդ երկրի այժմյան եւրոպամետ քաղաքականությունը գնահատելու այդ ամենի լույսի տակ: Ինչպես արդեն ասացինք, Վ. Բաումը իր հավաքած ամբողջ նյութը շարադրել է խիստ ժամանակագրական կարգով: Եւ դա հեղինակի ասելիքը մատուցելու արդարացված ձեւ է:

Քանի որ Թուրքիայի ողջ պատմությունը կազմված է միմյանց փոխլրացնող երկու հավասարապես արյունոտ հատվածից, որոնցից մեկը տարածքների նվաճումն ու թալանն է, մյուսը՝ այդ երկրների բնիկ մշակույթի եւ դրա ստեղծողների բնաջնջումը, ուստի Վ. Բաումը, ելնելով իր ուսումնասիրության՝ վերը նշված նպատակից, ներկայացնում է երկրորդ հատվածը՝ քրիստոնյա Արեւելքի կործանման պատմությունը սկզբի օրերից մինչեւ մեր ժամանակները: Հարկ է նշել նաեւ, որ թուրքական քոչվոր ցեղերը, Միջին Ասիայից ներխուժելով Փոքր Ասիա, այնուհետեւ Հարավարեւելյան Եւրոպա, դարձան եւրոպական պետությունների ու ազգերի հարեւանը:

Սակայն Վ. Բաումը գրում է, որ եւրոպական զարգացած պետական եւ հոգեւոր մշակույթը Օսմանյան պետական համակարգի վրա սկսել է ներգործել շատ ուշ՝ սկսած ԺԹ դարից: Ուստի ցույց տալու համար, թե նախքան այդ ազդեցությունը ինչ իրավիճակ էր տիրում Մերձավոր Արեւելքում, Բյուզանդական կայսրության արեւելյան տարածքներում եւ մասնավորապես Հայաստանում, Վ. Բաումը գրքի շարադրանքն սկսում է մուսուլմանների կողմից Փոքր Ասիայի գրավման պատմությունից: Հեղինակը գրում է, որ արաբները, սկսած ԺԲ դարից, Բյուզանդիայից գրավեցին շատ տարածքներ՝ Եփրատի եւ Տիգրիսի վերին հոսանքների շրջանները, Սիրիան, Պաղեստինը, Միջագետքը, իրենց տիրապետությունը հաստատեցին նաեւ Հայաստանում, Եգիպտոսում:

Արաբների առաջխաղացումը Փոքր Ասիայի խորքերը կասեցվեց միայն Կիլիկիայում, Տավրոսի լեռնաշղթայի գծով, որտեղ սկսել էր գերակշռել հայկական տարրը: Հետագայում այդ տարրի հիման վրա էր, որ կազմավորվեց Կիլիկիայի հայկական թագավորությունը, որը ԺԱ-ԺԴ դարերում քրիստոնեական կղզի մնաց արաբական նվաճումների պայմաններում:

Բաումն այստեղ նշում է, որ իսլամի առաջին հարյուրամյակում նրա տարածքային առաջխաղացումը չպետք է վերագրել արաբական ռազմական ուժի գերազանցությանը: Եւրոպայի սթափ փորձագետը կարծիք է հայտնում, որ իսլամի տարածման դեմ միասնական ճակատի ստեղծմանը խանգարում էին Արեւելքի քրիստոնյաների երկպառակությունները քաղաքական եւ կրոնական հողի վրա: Հիշենք բյուզանդական կայսրերի (այդ թվում նաեւ ծագումով հայ) թշնամական, զավթողական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, Ուղղափառ Եկեղեցու անվերջ հարձակումները Հայ Առաքելական Եկեղեցու դեմ, որոնք կազմում են Փոքր Ասիայի ընդհանուր պատմության մի ստվար, բաղկացուցիչ մասը:

Իսլամը որպես կրոն՝ չի ընդունում ուրիշ կրոնների, առանձնապես քրիստոնեության հետ խաղաղ գոյակցության գաղափարը, եւ դա նրա հիմնական առանձնահատկություններից մեկն է: Չի ընդունում նաեւ կրոնը պետությունից անջատելու գաղափարը: Այս ամենը կազմում են իսլամի ընկերային եւ քաղաքական հիմքը:

Բաումը գրում է, որ իսլամի նախնական շրջանում այդ հիմքը կազմող հիմնական համակարգը «դիմի»-ն էր (արաբ. պատիվ, խիղճ, պաշտպանություն, ապահովություն) եւ «ջիհադի» հասկացությունը: Դիմը սահմանում էր ուրիշ կրոնների պայմանագրային կապը իսլամական պետության հետ: Այն տարածաշրջանը, որտեղ իսլամն է իշխում, «իսլամի տունն» է, աշխարհի մնացած մասը՝ «պատերազմի տունը», որը պետք է նվաճել: Ըստ Ղուրանի՝ քրիստոնյաները, ինչպես նաեւ հրեաները, «գրքի ժողովուրդ» են, «անհավատներ», որոնց դեմ պետք է պայքարել եւ ստիպել, որ «ապահովության հարկ» վճարեն:

Վ. Բաումը նշում է, թե փվյալ հանգամանքով է բացատրվում իսլամի արագ տարածումը, քանզի այդ կրոնը դավանողները ազատվում էին հարկերից եւ ապրում էին թալանով ու քրիստոնյաների վճարած հարկերի հաշվին: Հարկերից մուսուլմանների ազատ լինելը նույնիսկ շատ քրիստոնյաների դրդում էր կրոնափոխության, որը ուրախությամբ էր ընդունվում իսլամի միջավայրում, մինչդեռ իսլամից դարձը դեպի քրիստոնեություն մինչեւ Ի դարը դատապարտվում էր մահապատժով:

Գրքում պարզաբանվում է, որ իսլամի այս դրույթները իրենց ուժը շատ երկար են պահել մասնավորապես Թուրքիայում:

Իսլամի մյուս հիմնական հասկացություններից մեկն էլ ջիհադն է (սրբազան պատերազմ անհավատների դեմ): Ջիհադը բացառում է խաղաղությունը, թույլատրում միայն ժամանակավոր զինադադարը: Այն բոլոր մուսուլմանների սրբազան պարտականությունն է:

Արաբ խալիֆ Օմար Երկրորդի (717-720թթ.) «Համաձայնագրում» սահմանված էր, որ քրիստոնյաները եկեղեցի ու վանք կառուցելու եւ նորոգելու իրավունք չունեն, չեն կարող վկայություն տալ դատարանում, հագնել նույն հագուստը, ինչ որ մուսուլմանը, նրանց արգելված է ձի հեծնել եւ զենք կրել:

Վ. Բաումը իսլամի այս ընկերային, քաղաքական հիմնադրույթները հանգամանորեն ներկայացնում է՝ ելնելով այն իրողությունից, որ թուրքերը, ներխուժելով Փոքր Ասիա եւ որպես նվաճողներ հաջորդելով արաբական խալիֆայությանը, ի դեմս իսլամի գտան դավանական, ընկերային-քաղաքական եւ իրավական մի պատրաստի համակարգ, որը իրագործելով կարող էին հաջողությամբ ստրկացնել բնիկ քրիստոնյա ազգերին՝ հայերին, հույներին , ասորիներին, բռնի ուժով ոչնչացնել նրանց ստեղծած նյութական եւ հոգեւոր արժեքները:

Թուրքերի զանգվածային ներխուժումը Փոքր Ասիա մեծ չափեր ընդունեց 1071թ. Մանազկերտի ճակատամարտից հետո, երբ բյուզանդացիները պարտվեցին սելջուկներից: Բաումն այստեղ շատ ուշագրավ դիտարկում է անում, որ Բյուզանդիան իր պարտությամբ շատ թանկ գին էր վճարում հայերի զինուժը եւ բանակը ցրելու համար: Բյուզանդիայի վիճակը ավելի բարդացրին խաչակրաց արշավանքները: Խաչակիրները, որ երդում էին տվել սատարելու Բյուզանդիային, 1097թ. սելջուկ-թուքերից հետ գրավեցին որոշ տարածքներ, սակայն դրանք Կոստանդնուպոլսին չվերադարձրին, այլ ստեղծեցին իրենց «լատին» պետությունը: 1024թ. նրանք իրենց չորրորդ արշավանքով գրավեցին Կոստանդնուպոլիսը, որը մինչեւ 1261թ. դարձրին այսպես կոչված «Լատին կայսրության» մայրաքաղաքը: Հատկանշական է, որ Վ. Բաումը հատուկ շեշտում է, թե Կիլիկիայի հայկական թագավորությունը ստեղծեցին այն հայերը, որոնք բյուզանդացիների եւ թուրքերի ներխուժումների հետեւանքով թողեցին իրենց բուն հայրենիքը եւ գաղթեցին հարավ՝ Տավրոսի շրջանը: Բաումը գրում է, թե նրանք այդ տարածքում ստեղծեցին Փոքր Հայքի իշխանությունը: Այն գոյություն ունեցավ մոտ երկուսուկես դար՝ չորս կողմից շրջապատված թշնամիներով: Կիլիկյան Հայաստանը կենաց եւ մահու պայքար էր մղում մասնավորապես մամլուքների եւ թուրքերի դեմ: Թշնամական շրջապատում մնալով որպես քրիստոնեական կղզի, այդ իշխանության ուժերը անհավասար պայքարում սպառվեցին, եւ մամլուքները 1375թ. գրավեցին նրա մայրաքաղաք Սիսը, դրանով կործանելով վերջին քրիստոնեական իշխանապետությունը Արեւելյան Անատոլիայում:

1453թ. Կոստանդնուպոլիսը գրավելուց հետո, Օսմանյան պետությունը

ձեռքերի լիակատար ազատություն զգաց սեփական հայեցողությամբ վարվելու քրիստոնեական փոքրամասնությունների հետ, ըստ իր շահերի կազմակերպելու նրանց ընկերային կեցությունն ու հոգեւոր -մշակութային կյանքը:

Այդ նպատակին էր ծառայում «միլեթ» (արաբ. կրոն) համակարգը: Դոկտոր Բաումը հանգամանորեն վերլուծում է մասնավորապես հայ եւ հույն համայնքների համար այն բոլոր աղետալի հետեւանքները, որոնք ունեցավ տվյալ համակարգի իրագործումը: Հեղինակը նշում է, որ սուլթան Մեհմեդ Երկրորդի հրամանով միլեթ (այսինքն՝ կրոնական համայնք) կազմվեց հույներից եւ հայերից: Գրեթե միաժամանակ հույն եւ հայ միլեթների կառավարման համար նշանակվեցին պատրիարքներ. դա սոսկ հոգեւոր պաշտոն չէր, քանզի պատրիարքը կոչված էր կառավարելու իր համայնքի կյանքի բոլոր բնագավառները: Նա պարտավոր էր որոշ գումար վճարել սուլթանին եւ վերահսկել «միլեթի» բոլոր անդամներից պետական հարկերի ու տուրքերի հավաքումը: Հույն Ուղղափառ եւ Հայ Առաքելական եկեղեցիները իրենց ծխերով պետությանը ծառայում էին որպես ռայա (արաբ. բանող անասուն), որպես քրիստոնյա բնակչության լավ կազմակերպված եւ պատրիարքներին հլու համայնքներ:

Քրիստոնյաները կարող էին իրենց եկեղեցիները պահել, սակայն նորերը կառուցելու, ինչպես եւ զենք կրելու իրավունք չունեին: Նրանք կարող էին Ստամբուլում (այդպես վերանվանվեց Կոստանդնուպոլիսը) բնակվել միայն չորս շրջաններում եւ միայն այդ տարածքներում պահել իրենց եկեղեցիները, որոնց մեծ մասը նրանցից խլվեց, այնպես որ ԺԸ դարում օսմանյան մայրաքաղաքում մնացել էր միայն երեք քրիստոնեական եկեղեցի:

Հայ բնակչությունից, «միլեթ» կազմավորելու եւ նրա կյանքի կառավարման համար տվյալ համայնքի ներսում բոլոր իրավասություններով օժտված պատրիարք նշանակելու՝ սուլթանի որոշումը, ըստ Վ. Բաումի, պայմանավորված էր այն հանգամանքով, որ Էջմիածնի, Աղթամարի եւ Սսի կաթողիկոսների, ինչպես նաեւ Երուսաղեմի պատրիարքի նստավայրերը գտնվում էին օսմանյան տիրապետություններից դուրս: Սուլթանը դրանով փաստորեն ձգտում էր սիրաշահել հայ համայնքին:

Այստեղ հատկանշական է Վ. Բաումի այն դիտարկումը, որ նշված նպատակով հայ պատրիարքը հետագայում իրավունք ստացավ նաեւ վերահսկելու ասորական, քաղդեական, ղպտիական եւ վրացական համայնքների կյանքը, որոնք իրենց սեփական «միլեթը» չունեին:

Սակայն սիրաշահելու այդ քաղաքականությունը զուտ արտաքին, երեւութական բնույթ ուներ: Իսկ օսմանյան մուսուլմանական պետության զարգացման ներքին տրամաբանությամբ ամեն ինչ արվում էր քրիստոնեականը ոչնչացնելու համար: Այսպես՝ 1520թ. սուլթան Սելիմը հրամայեց մզկիթների վերածել բոլոր քրիստոնեական եկեղեցիները: Թույլատրվում էր նոր եկեղեցի կառուցել միայն փայտից:

Վ. Բաումը բազում պատմական փաստեր վկայակոչելով ապացուցում է, որ քրիստոնյա բնակչության, մասնավորապես հայերի նկատմամբ երկու մուսուլմանական պետությունների՝Օսմանյան կայսրության եւ Պարսկաստանի քաղաքականությունը զավթողական, թալանչիական էր եւ միշտ իրականացվում էր կրոնական մոլեռանդությամբ եւ անհանդուրժողականությամբ: Ժողովրդի բուն կենսական շահի դեմ ուղղված առաջին հարվածը գրեթե միշտ հասցվում էր եկեղեցուն: Դա պատահական չէր. չէ՞ , որ քրիստոնեական փոքրամասնության

ընկերային-քաղաքական եւ հոգեւոր-մշակութային կենտրոնը եկեղեցին էր, բացի այդ, այնտեղ էին հավաքվում սեփական ինքնության պաշտպանությանը ծառայող ժողովրդական վերջին խնայողությունները: Այսպես, 1578 թ. Մուրադ Երկրորդը գրավեց Արեւելյան Հայաստանը եւ 60.000 հայ գաղթեցրեց Արեւմտյան Անատոլիա: Ավելի վաղ, 1554 թ. թուրքերը ներխուժեցին Երեւան եւ այն հողին հավասարեցրին: Իր հերթին Շահ Աբասը 1603թ. գրավեց Երեւանը, Թավրիզը եւ Էրզրումը՝ հիմնովին ավերելով այդ քաղաքները, իսկ Պարսկաստան վերադառնալիս իր հետ այնտեղ քշեց մինչեւ 300.000 հայերի: Սուլթանները պարբերաբար հրամաններ էին արձակում մզկիթների վերածելու քրիստոնեական եկեղեցիները: Հաճախ այդպիսի հրամանների իրականացումը կասեցնելու համար քրիստոնյաներից պահանջվում էին խոշոր գումարներ, եւ դա դառնում էր նրանց հարստահարելու եւ եկեղեցիները սնանկացնելու մի ձեւ:

Քանի որ Վ. Բաումի ուսումնասիրության ենթավերնագիրն է՝ «Անցյալը, ցեղասպանությունները, ներկան», ուստի հեղինակը այս ամենը ներկայացնում է որպես հայերի, հույների, ասորիների ցեղասպանություններին նախորդած մի իրավիճակ՝ իր պատմական տարբեր հոլովույթներով:

Չնայած դաժան ճնշումներին, հայ մշակույթը, գրում է Վ. Բաումը, օսմանյան խավար միջնադարում գոյատեւեց շնորհիվ գաղթավայրերի: Ի տարբերություն հայ, հույն եւ մելքիդ եկեղեցիների, հակոբիկյան եկեղեցին արտասահմանում համայնքներ չունենալու պատճառով չկարողացավ պահպանել իր հոտի հոգեւոր մշակույթը:

Օսմանյան կայսրությունը ԺԷ-ԺԸ դարերում շարունակեց քրիստոնեական մշակույթի բնաջնջումը նախկին ողջ բյուզանդական տարածքում, Արեւմտյան Հայաստանում, Սիրիայում, Պաղեստինում եւ այլուր:

Վ. Բաումն այնուհետեւ գրում է, թե այդ ժամանակամիջոցում թուրքերի՝ դեպի Եւրոպա առաջխաղացման պատճառով աճում էր հետաքրքրությունը Օսմանյան կայսրության նկատմամբ: Նա նշում է մի շարք եւրոպացի գործիչների ուղեգրությունները, որոնք հավատի տվյալներ են բովանդակում քրիստոնեական փոքրամասնությունների թվաքանակի եւ գործող եկեղեցիների մասին:

Ամփոփելով այդ ուղեգրությունների բովանդակած տվյալները, Վ. Բաումը գրում է, որ Թուրքիայի փոքրասիական մասում ԺԷ-ԺԸ դդ. պահպանվել էր 17 Հույն Ուղղափառ (Նիկոմեդիա, Կյուզիկոս, Զմյուռնիա, Քուշասայ (Եփեսոս), Անկյուրա, Սինոպ,Պեսինուս, Կոնյա, Կեսարիա, Ամասիա, Հեյբելի, Ալոնիա, Տրապիզոն, Կերասոն եւ Էրզրում, ինը Հայ Առաքելական (Բրուսա, Զմյուռնիա, Մազնեզիա, Կարահիսար, Անկյուրա, Սիս, Թոքատ, Կարս եւ Էրզրում), չորս հակոբիկյան (Ամիդ, Սաուրա, Մարդին, Եդեսիա), երկու նեստորական (Ամիդ եւ Սղերդ) եպիսկոպոսություն, թվով ընդամենը 32:

Այդպիսով, օսմանյան տիրապետության երեք դարերից հետո Արեւելքի եկեղեցիները տնօրինում էին որոշ թվով եկեղեցական ենթակառույցներ, թեեւ խիստ կրճատված թե՛ բնակչության կազմի առումով, թե՛ կրոնական առաջնորդների իրավասությունների տեսակետով, ընդ որում ուղղափառների եւ հայերի վիճակն ավելի բարվոք էր, քան ասորի քրիստոնյաներինը: Պատճառն այն էր, որ ասորիները կրթական հաստատություններ եւ արտասահմանի հետ կապեր չունեին, ինչպես «միլեթ» ունեցող ազգերը, որոնց որոշ չափով հովանավորում էին եւրոպական երկրները եւ Հռոմի պապը:

Վ. Բաումը որպես Օսմանյան պետությունում իրավական համակարգի

բարելավման փորձ առանձնացնում է այսպես կոչվող «թանզիմաթի»՝ «բուժիչ բարեփոխումների» շրջանը, որն սկսվեց 1839թ: Սակայն այդ բարեփոխումները, որոնցով նախատեսվում էր օսմանյան քաղաքացիություն տալ նաև ոչ-մուսուլմաններին, ձեռնարկվում էին ոչ իշխանությունների բարի կամքով, այլ արդյունք էին կայսրության թուլացման, որի անմիջական արտահայտությունը Թուրքիայի պարտությունն էր Եգիպտոսում: Բացի այդ՝ թանզիմաթի հռչակումով Թուրքիան մտադիր էր եւրոպական պետություններին զրկել քրիստոնյա հավատակիցներին պաշտպանելու եւ այդ պատրվակով Օսմանյան պետության ներքին գործերին միջամտելու հնարավորությունից:

Թուրքիան այդ ժամանակ մնում էր բազմազգ պետություն. 19-20 միլիոն մուսուլմանների հետ, որոնցից միայն 2 միլիոնն էր ապրում Եւրոպայում, ապրում էին 2 միլիոն հույներ, 2.4 միլիոն հայեր եւ 6 միլիոն սերբեր:

Վ. Բաումն ընդհանրապես շեշտում է, որ Թուրքիայում քրիստոնյաների օգտին իրավական ցանկացած բարեփոխության փորձ անմիջապես բորբոքում էր մուսուլմանների մոլեռանդությունը: Որպես դրա ապացույց հեղինակը վկայակոչում է եւրոպացի գործիչների հաղորդած տեղեկությունները. այսպես՝ Անգլիայի հյուպատոս Թեյլորը 1869թ. հաղորդել է, որ թանզիմաթի առաջին փուլում Էրզրումի նահանգի քրիստոնեաբնակ 106 գյուղից երեք տարվա ընթացքում մնացել էր միայն 76-ը: Ասորի պատրիարք Իգնատոսը հաղորդել է, որ 1870թ. միայն Դիարբեքիրի նահանգում կար ասորիներով բնակեցված 291 քաղաք ու գյուղ. 135 տարվա ընթացքում այդ բնակավայրերի 94 տոկոսն ամայացել էր:

Օսմանյան իրավական երկակի համակարգը հենվում էր հավասարության եւ անհավասարության վրա. ընդհանրապես թանզիմաթը մեկնաբանվում է որպես օսմանյան դաժան ավատատիրական հասարակարգի ճգնաժամի եւ Թուրքիայի ռազմական հզորության անկման հետեւանք: Թանզիմաթի փուլում միաժամանակ ուժեղանում էր եւրոպական պետությունների ճնշումը Թուրքիայի վրա:

1856 թ. Փարիզյան կոնգրեսում այդ ճնշման տակ սուլթանը նոր բարեփոխություն հռչակեց, որով սկսվեց թանզիմաթի երկրորդ փուլը:

Բաումն ընդգծում է, որ բարեփոխումներին զուգահեռ ուժեղանում էր նաեւ ազգայնամոլական շարժումը: Ձեւավորվեց «երիտասարդ օսմանների» ընդդիմությունը, որը չէր ընդունում մուսուլմանների հետ քրիստոնյաների իրավական հավասարության գաղափարը: Դա, փաստորեն պանիսլամական դիրքորոշում էր, որը հետագայում որպես գործելակերպ ժառանգեցին «երիտթուրքերը»:

Վ. Բաումը հետաքրքիր դիտարկում է անում, որ Բալկանների կամ Կովկասի այն տարածքներից, որոնք թուրքերից գրավել էին քրիստոնյա պետությունները, մուսուլման չերքեզները, աբխազները, չեչեններն ու աջարները փախչում էին Արեւմտյան Հայաստանի հայկական բնակավայրերը, որի հետեւանքով դրանց ազգային կազմը զգալի փոփոխություններ կրեց:

Նոր սուլթանը՝ բռնակալ Աբդուլ Համիդ Երկրորդը (1876-1909թթ.) քոչվոր քրդերին հրահրում էր հայերի դեմ: Քրդերը անվերջ թալանում էին հայերի ունեցվածքը:

Նոր սուլթանին պարտադրվեց նոր սահմանադրություն, որը հռչակվեց 1876թ.: Հայ իրավաբան Գրիգոր Օտյանը, շնորհիվ իր բարձր դիրքի, մասնակցեց հայ համայնքի ազգային եւ օսմանյան պետության սահմանադրությունների մշականը: Նոր օրենքով իսլամը հռչակվեց պետական կրոն, սակայն երաշխավորվեց նաեւ մյուս կրոնների ազատությունը: Այստեղ պետք է նշել, որ Վ. Բաումն իր հավաքած

ամբողջ նյութը շարադրում է Թուրքիայի ներքին եւ արտաքին զարգացման համապատկերի վրա:

Նոր սահմանադրությամբ նշանակվեցին պառլամենտի ընտրություններ, որոնցում քրիստոնյա քաղաքացիները ունեցան զգալի թվով պատգամավորներ:

1877 թ. Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային: Հատկանշական է, գրում է Վ. Բաումը, որ այդ պատերազմում երկու խոշոր զորամասերի հրամանատարները հայ գեներալներ էին՝ Լորիս-Մելիքովը եւ Տեր-Ղուկասովը: Հայերը ամենուր ջերմորեն էին ընդունում նրանց, այդ հանդամանքը հետագայում բորբոքեց մուսուլմանների ատելությունը. ավելի ուշ, երբ ռուսական զորքը Եւրոպայի ճնշման տակ ետ քաշվեց գրավված տարածքների մեծ մասից, 40.000 հայ ընտանիք գաղթեց Ռուսաստան: Թուրքիան այդ պատերազմում կորցրեց իր գրեթե բոլոր եւրոպական տիրույթները. Հարավային Ուկրաինան, Բեսարաբիան, Ղրիմը, Հյուսիսարեւմտյան Կովկասը, Կովկասի սեւծովյան ափը, Հարավարեւմտյան Վրաստանը եւ Արեւմտյան Հայաստանի հյուսիսային մասը: Այդ արդյունքները արտացոլվեցին Սան-Ստեֆանոյի պայմանագրում:

Սակայն անհանգստանալով, որ թե՛ Բալկաններում, թե՛ Կովկասում Ռուսաստանը ուժեղանում է, արեւմտյան տերությունները, մասնավորապես Անգլիան, պատերազմի սպառնալիքով Բեռլինի 1878թ. կոնգրեսում Ռուսաստանին ստիպեցին զգալի զիջումներ անել: Բանակցող կողմերը համաձայնության եկան, որ հայերը Արեւմտյան Հայաստանում ինքնակառավարում ստանան: Թուրքիան առերես խոստացավ, որ կիրականացնի 61-րդ հոդվածով նախատեսված բարեփոխումները, սակայն այդ հոդվածը շատ շուտով գլխիվայր շրջվեց՝ դառնալով 16-րդ կետ, որը գրեթե ոչինչ չէր տալիս հայերին:

Բաումն այստեղ ճիշտ գնահատական է տալիս այդ պատմական անցուդարձին, նշելով, որ Բեռլինում, փաստորեն Հայկական հարցին առաջին անգամ տեսականորեն միջազգային բնույթ էր տրվում: Սակայն անմիջապես էլ նշում է, թե որոնք էին պատմական այդ փուլի իրական, թաքնված գործոնները. Թուրքիային օժանդակելու դիմաց Անգլիան պետք է ստանար Կիպրոսը, զգալի օգուտներ էր ստանում նաեւ Ավստրո-Հունգարիան:

Վ. Բաումը բառացի մեջբերում է Անգլիայի արտգործնախարար Սոլսբերիի խոսքերը. նա ասել է, թե ինքը չի հավատում, որ Թուրքիայում բարեփոխումներ կիրականացվեն եւ չի կարծում, թե կգտնվեն քրիստոնյաներին պաշտպանելու ազդեցիկ միջոցներ: Անգլիացի դիվանագետն ավելացրել է, թե իր բուն նպատակն է թույլ չտալ, որ Ռուսաստանը գրավի Արեւմտյան Հայաստանը:

Բեռլինի Վեհաժողովից հետո ստեղծվեցին առաջին հայկական կուսակցությունները. Վանում 1872թ. «Միություն եւ Փրկություն», 1878թ՝ «Սեւ խաչը», 1882թ. Էրզրումում՝ «Պաշտպան հայրենյացը» , 1885թ. Վանում՝ «Արմենականը» , 1887թ. Թիֆլիսում՝ «Հնչակը»: Այս ամենին, գրում է եւրոպացի արեւելագետը, սուլթան Աբդուլ Համիդը պատասխանում էր զենքի լեզվով. հայերի ազատասիրական շարժումները ճնշելու համար 1891թ. ստեղծվեցին «համիդիե» զինյալ ջոկատները:

1893թ. հայերը Սասունում հրաժարվեցին հարկ վճարել. այդ առիթով կառավարության հրահրմամբ քրդերն այրեցին 30 գյուղ եւ սպանեցին բնակիչներին: 1895-96թթ. տեղի ունեցան առաջին զանգվածային ջարդերը. տարբեր վայրերում կոտորվեց մոտ 100.000 հայ: Կոտորածների լուրերը արագ տարածվեցին Եւրոպայում: Մեծ տերությունները սուլթանի առջեւ դրեցին բարեփոխումների մի նոր նախագիծ: Սուլթանը կրկին առերես ընդառաջեց առաջարկին:

Վ. Բաումը փվյալ պատմական փուլը մեկնաբանելիս ելակետ է ընդունում այն, որ Արեւմտյան երկրները, նկատի ունենալով Օսմանյան պետության թուլացումը, մի կողմից փայփայում էին օսմանյան ժառանգությունը իրար մեջ բաժանելու ծրագրեր, մյուս կողմից, տեսնելով քրիստոնյա բնակչության հետ իսլամական պետության խնդիրները, փորձում էին Թուրքիայի ներքին գործերին չմիջամտելու դիմաց ապահովել իրենց շահերը այդ երկրում: Ըստ Վ. Բաումի այդպես եղավ մասնավորապես թանզիմաթի երկրորդ փուլում, երբ Թուրքիային պարտադրվեցին պայմաններ, որոնք հիմնականում բխում էին արտասահմանյան կապիտալի շահերից: Մի խոսքով, ըստ հեղինակի, Արեւմտյան երկրները, չտեսնելու տալով հայերի, հույների, մյուս քրիստոնյաների հալածանքները, Թուրքիայից պոկում էին իրենց պատառները, իսկ Բեռլինյան վեհաժողովում ընդհանուր ճակատ կազմեցին ընդդեմ Ռուսաստանի, որպեսզի Թուքիայի բաժանման դեպքում նվազագույնի հասցնեն ցարի ստանալիք բաժինը:

Թուրքիայի ամենատարբեր շրջաններից եւրոպացի դեսպաններն ու հյուպատոսներն անվերջ տեղեկություններ էին հաղորդում հայերի ջարդերի մասին: Հայոց պատրիարքարանի տվյալներով 1895թ. երկրում ապրում էր մոտ երկու միլիոն 100.000 հայ: Նրանց թիվը վեց նահանգներում կազմում էր բնակչության մոտ 40 տոկոսը, թուրքերինը՝ մոտ 24.4 եւ քրդերինը՝ 16.3 տոկոսը:

Շուտով հայ բնակչությունն ունեցավ մի վտանգավոր թշնամի. Ստամբուլի զինվորական ակադեմիայում ստեղծվեց «Միություն եւ առաջադիմություն» գաղտնի քաղաքական կոմիտեն, հեղաշրջի իթթիհատը կամ երիտթուրքերի միությունը, որը ծրագրում էր կայսրությունը դարձնել զուտ մուսուլմանական պետություն:

Վ. Բաումը շեշտում է՝ 1895-96թթ. հայերի զանգվածային ջարդերին զոհ գնաց 100.000 հայ, ոչնչացվեց 2500 գյուղ, ավերվեցին կամ մզկիթի վերածվեցին բազմաթիվ հայկական եկեղեցիներ:

Երիտթուրքերը սկզբնական շրջանում քննադատեցին ջարդերը, բանավոր համերաշխություն հայտնեցին հայերի հետ: Աբդուլ Համիդը, տեսնելով, որ հանձին երիտթուրքերի ինքն ունի երկրորդ հեղափոխական ուժը հայերի կողքին, լուծարեց նրանց կազմակերպությունը:

1895/96թթ. հայերի ջարդերի ընթացքում հատուկ դեպք էր Զեյթունի ապստամբությունը: Վ. Բաումը հաղորդում է, որ հայերը այդ քաղաքում պահպանել էին մեծամասնությունը եւ դեռեւս 1618-ից ազատ էին հարկերից:

Իսկ 1862թ. հաջողությամբ դիմադրեցին թուրքական 25.000-անոց զորքին: 1895թ. հայերը Հնչակյան կուսակցության գլխավորությամբ հարձակվեցին տեղի կայազորի վրա եւ բանտ նետեցին 5.000 զինվոր: Դրանից հետո 5.000 հազար թուրք, քուրդ եւ չերքեզ հարձակվեցին քաղաքի վրա, որը պաշտպանում էին 2.000 հայ զինյալներ: Մեծ Բրիտանիայի հյուպատոս Բեռնհամը հաղորդել է, որ այդ ընթացքում սպանվել է առնվազն 5.000 օսմանցի զինվոր:

Իշխանությունը 1896թ. սկզբին ստորագրեց համաներման պայմանագիր, որի շնորհիվ կոտորածից փրկվեց 30.000 հայ: Վ. Բաումը Զեյթունի այդ իրադարձությունները շարադրում է այն միակ իրատեսական դիտակետով, որ հայերը որտեղ կազմակերպված դիմադրություն էին ցույց տալիս, այնտեղ իրերի ընթացքը աղետալի չէր լինում նրանց համար:

Վ. Բաումը շատ հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում ժամանակի հրեա գործիչ Թ. Հերցլի գործունեության մասին: Նա 1896թ. գնում է Ստամբուլ՝ սուլթանին մասնակից դարձնելու հրեական պետության ստեղծման իր ծրագրին:

Քանի դեռ թուրքական կառավարությունը սիոնիստական շարժմանը չի արտոնել ստանձնելու Պաղեստինի ինքնավարությունը, այդ տարածքում գաղութացման թուրքական քաղաքականությունը շարունակելը ճիշտ չէ. ահա այդ ժամանակ Վերցլի դիրքորոշումը:

Մեկ ուրիշ հրեա գործչի՝ Նեուլինսկու կարծիքով սուլթանի միակ փրկությունը երիտթուրքերի հետ միանալն էր, քանզի վերջիններս լավ հարաբերությունների մեջ էին հայերի հետ:

Իսկ Ավստրիայի դեսպան Կազիսի դիրքորոշման մասին Վերցլը գրում է. «Նա Հայկական հարցը էապես այլ կերպ է ներկայացնում, քան թուրքերը, որոնք փաստերը միշտ կեղծում են: Բայց հենց որ տագնապն անցնի, դրա մասին այլևս չեն մտածի»:

Վերցլը գտնում էր, որ անհրաժեշտ է սուլթանին օժանդակել Հայկական հարցում, որպեսզի հայերը ենթարկվեն նրան եւ նա դիմազուրկ չլինի, որից հետո նա հայերին կընդառաջի բարեփոխումների հարցում: Վերցլը գրում է. «Հայերը ոչ մի դեպքում չպետք է տեղեկանան, որ մենք ուզում ենք իրենցից օգտվել հրեական անկախ պետություն ստեղծելու հարցում, այլապես նրանք գուցե փորձեն ընդօրինակել մեզ, իսկ մենք այդ դեպքում մեկ խնդիր ավելի կունենանք»:

1908թ. երիտթուրքերը գահընկեց արեցին սուլթանին եւ նոր սուլթան հռչակեցին նրա եղբորը: Դրանով փաստորեն ստեղծվեց սահմանադրական միապետություն: Սակայն հակահեղափոխական ուժերը դեռեւս լիովին չէին պարտվել: Ուստի երիտթուրքերը շարունակում էին առերես քաղաքականությամբ սիրաշահել քրիստոնյաներին, մասնավորապես հայերին: Թալեաթ փաշան դարձավ ներքին գործոց նախարար, նա օրենքով արգելեց տարբեր բնույթի ազգային ու կրոնական միությունների ստեղծումը:

Վերագա իրադարձությունները ամբողջ սրությամբ ի ցույց հանեցին Օսմանյան պետության ընդհանուր ճգնաժամը: 1911թ. թուրք-իտալական, 1912թ. Բալկանյան պատերազմներում Թուրքիան կորցրեց կայսրության մեկ երրորդը: Վ. Բաումը այս պատմական համապատկերը ուրվագծում է ցույց տալու, որ երիտթուրքերը, այլևս հույս չունենալով տիրույթներ գրավել Եւրոպայում, պետք է իրենց հայացքը ուղղեին դեպի երկրի ներսը եւ դեպի Արեւելք, իսկ դեպի ներս նայելը նոր իշխանությունների համար ուներ միայն մի նպատակ՝ բնաջնջել քրիստոնյա բնակչությանը, նրա դիակի վրայով ճանապարհ հարթել մինչեւ Մոնղոլիա, դրանով իրագործել պանթուրքիզմի ծրագիրը: Երիտթուրքերի մտահղացմամբ հարկավոր էր այդ գաղափարով հրապուրել թյուրքալեզու ժողովուրդներին, մի վիթխարի թիկունք ստեղծել Արեւելքում եւ դրա օգնությամբ օսմանյան տիրապետությունը ծավալել այս անգամ դեպի Արեւելք:

Սկսած 1913թ. վերջերից իշխանությունն ամբողջովին անցավ երիտթուրքական եռապետությանը՝Թալեաթ, Ջեմալ եւ Էնվեր փաշաներին: Միաժամանակ ստեղծվեց նաեւ «Teskilati Mahsusa» հատուկ միությունը, որն իրականացնելու էր Փոքր Ասիայի թրքացումը: Իսկ զարնանից գաղտնի նիստերում քարոզվում էր իթթիհաթական կուսակցության կենտրոնի նպատակը՝«Ոչնչացնել այն բոլոր ոչ թուրքական բնակավայրերը, որոնք գտնվում են ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող դիրքերում»:

Եւրոպացի փորձագետը, նյութի շարադրանքը հասցնելով մինչեւ առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, անկողմնակալ եւ անաչառ վերլուծում է այն ծրագրերը, որոնցով Անտանտի եւ Եռյակ դաշինքի երկրները մտան իրենց

նախապատրաստած համաշխարհային այդ արյունահեղ արկածախնդրության մեջ: Այսպես, Անգլիան խիստ անհանգստացած էր, որ Գերմանիան կառուցում է Բաղդադի երկաթուղին, որը վտանգ էր սպառնում Հնդկաստանի հետ իր ծովային ու ցամաքային հաղորդակցությանը: Այդ հարցում Գերմանիայի եւ Թուրքիայի շահերը համընկնում էին. ուստի վերջինս մի փոքր հապաղեց պատերազմի մեջ մտնել եւ հարմար առիթի սպասելով՝ աշնանը հարձակվեց Ռուսաստանի սեւծովյան քաղաքների վրա: Ավստրո-Հունգարիան ձգտում էր ամրապնդվել Բոսնիա-Հերցեգովինայում եւ Սերբիայում: Դա խիստ դեմ էր Ռուսաստանի շահերին, որը Բալկանյան սլավոնական երկրներին օգնել էր անկախություն ձեռք բերելու, ուստի իրեն իրավունք էր վերապահում ներկայություն ունենալ այդ երկրներում:

Գերմանիայի եւ Ռուսաստանի շահերը բախվում էին Հարավային Կովկասում եւ Մերձավոր Արեւելքում: Վ. Բաումն ահա այսպես է ուրվագծում շահերի այն հիմնական բախումը, որ հանգեցրեց համաշխարհային բախմանը: Ուշագրավ է, որ խաղացող երկրների մեջ միակ մահմեդական երկիրը Թուրքիան էր, որի գերագույն հոգեւոր առաջնորդը իր երկրի աշխարհիկ իշխանություններից անմիջապես հետո ջիհադի՝ սրբազան պատերազմի կոչ արեց. դա պատերազմի կոչ էր նաեւ իր իսկ երկրի քրիստոնյաների, հատկապես հայերի դեմ: Ահա այն անաչառ պատկերը, որը փաստարկված ուրվագծում է արդի անկախ փորձագետներից մեկը՝ Վ. Բաումը:

Նա համարում է, որ երիտթուրքերի կենտրոնում հայերի բնաջնջման վերջնական որոշումն ընդունվել է 1915թ. մարտին: Գրքում վկայակոչվում է փետրվարի 18-ին իթթիհաթի կենտրոնի՝ Ադանայի կառավարիչ Ջեմալ բեյին ուղարկված գաղտնի գրությունը. «Թուրքիայում միակ ուժը, որը կարող է խանգարել իթթիհաթի քաղաքական կյանքին, հայերն են: Կենտրոնը իր հայրենասեր ուսերի վրա է վերցնում օսմանյան պատմության վրա ծանրանալիք վատ համբավի պատասխանատվությունը: Կոտորածներն իրականացնելու համար նահանգապետերն ու հրամանատարները ժամանակին կստանան անհրաժեշտ ցուցումները»: Այս փաստաթուղթը գրքում վկայաբերված է իբրեւ մի նմուշ այն բոլոր գրությունների, որոնք հիարկե, իթթիհաթը ուղարկում էր բոլոր վիլայեթների կառավարիչներին: Գրությունը ցույց է տալիս նաեւ, թե թուրք պետությունը ինչ քաղաքական ու գաղափարական պատճառաբանությամբ էր ձեռնամուխ լինում հայ ազգի բնաջնջմանը:

Վան քաղաքը, գրում է Վ. Բաումը, այն սակավաթիվ վայրերից էր, որտեղ հայերը դիմադրեցին թուրքերին: Ջենքի ընդունակ բնակիչները ամրացան միջնաբերդում: Մայիսի 18-ին ռուսները անապասելիորեն ազատագրեցին պաշարվածներին: Սակայն թուրք ջարդարարները հասցրել էին սպանել 55.000 հայ:

Վ. Բաումի նկարագրած այս իրադրությունը եւս ընդհանրական մի օրինակ է, որը ցույց է տալիս, թե ջարդերը քիչ տարբերությամբ ինչ դաժան միջոցներով են իրականացվել մնացած բոլոր հայկական բնակավայրերում: Վ. Բաումը վկայակոչում է այդ բովանդակությամբ բազում գաղտնի գրություններ, որոնց մեջ առավել խոսուն է Թալեաթի հեռագիրը Հալեպի կառավարիչին. «Հարկավոր է Թուրքիայում հայերի ապրելու իրավունքը իսպառ վերացնել: Կառավարությունը, որը ամբողջովին ստանձնում է դրա պատասխանատվությունը, հրամայել է չխնայել նույնիսկ օրորոցի երեխաներին»: - Սա է հիմք հանդիսացել,- գրում է հեղինակը,- որ Թալեաթը 1919թ. դատապարտվել է մահվան:

Մինչեւ 1907թ. հարյուր հազարավոր հայեր զոհ դարձան հալածանքների, սպանվեցին, տեղահանվեցին կամ գաղթեցին, սակայն 1915թ. երիտթուրքերի

նպատակը որոշակիորեն այլ էր՝ ռասիպական հիմնավորմամբ բնաջնջել մի ողջ ժողովուրդ: Դա որակապես բոլորովին նոր երեւույթ էր, որը հնարավոր չէ համեմատել Օսմանյան կայսրության սուլթանական շրջանի կոտորածների հետ: Ահա երիտթուրքերի անլուր եղեռնագործությանը եւրոպացի փորձագետի տված առավել ընդհանրական գնահատականներից մեկը:

Վ. Բաումը կոտորածների ու տեղահանությունների առավել լայն համայնապատկերը ուրվագծելու համար վկայակոչում է բազում եւրոպական դեսպանների, հյուպատոսների, ռազմական գործիչների եւ պարզապես ականատեսների հաղորդած տեղեկությունները: Ահա Սամսունի փոխհյուպատոսի հաղորդումը, որը եւրոպացիների վկայությունների մեջ առավել ընդհանրացվածն ու փաստաբանվածն է. «Հույն քրիստոնյաները վախից դողում են, եւ իրավացիորեն, քանզի հավատացած են՝ առաջին պատեհ առիթով իրենք եւս կարժանան նույն ճակատագրին, ինչ որ հայերը: Եթե Հունաստանը անցնի թշնամու կողմը, Թուրքիայում նրա հավատակիցները դատապարտված են: Նաբուկեդնեզարը եւ Աբդուլ Համիդը հոգեկան հիվանդներ էին եւ բնաջնջման գործում խիստ անճարակ մարդիկ: Մինչդեռ այն, ինչ հիմա ենք սարսուռով տեսնում, այն է՝ մի քանի շաբաթվա ընթացքում հսկա երկրով մեկ մի ամբողջ ժողովրդի իրագործված բնաջնջումը, ո՛չ նրանք, ո՛չ Չինգիզ խանն ու Թամեռլանը եւ ո՛չ հին թուրք սուլթանները ի վիճակի չէին իրագործել»:

Տեղահանվածները քշվում էին նախապես ընտրված համակենտրոնացման ճամբարները, որտեղ նրանք մի քանի ամսվա ընթացքում մահանում էին: Վ. Բաումը փվյալներ է բերում, թե մահվան այդպիսի ճամբարներից քանիսում քանի հայ էր մահվան բերան քշվել: Իսլահիյե-60.000, Մամուրա-40.000, Ռաջո, Կարմա եւ Ասաս-60.000, Բաբ եւ Ախտերմին-60.000, Մեսքենե-60.000, Դիպս-30.000, Զեբելակա-30.000, Դեր-էս Զոր-200.000, Ռաս-ուլ-Այնի -70.000, Ինթիլի-50.000, Գյոլջյուք-10.000 եւ այսպես շարունակ:

Վ. Բաումը գրում է, թե հայերի եւ հույն ուղղափառների հետ միասին ասորի քրիստոնյաները եւս իրենց բաժինը ունեցան 1915/17թթ. ջարդերում: Մարդինի շրջակայքում սպանվեց 90.000 հակոբիկ, ամայացավ 336 գյուղ, ավերվեց 162 եկեղեցի, սպանվեց 136 քահանա: Այդպիսով քրիստոնյաներն իրենց վաղնջական բնօրրան Միջագետքում վերածվեցին նվազող մի փոքրամասնության:

Կոտորածները արտացոլում գտան բազում եւրոպացի գործիչների եւ բուն իսկ թուրք ջարդարար ղեկավարների հաղորդումների ու հայտարարությունների մեջ. բնաջնջման չափերը այնքան վիթխարի էին, որ դրանք ընդամենը մեկ ամիս անց՝ 1915թ. մայիսի 24-ին արտացոլվեցին Անտանտի երկրների հետեւյալ հայտարարության մեջ.

«Նկատի ունենալով Թուրքիայի՝ մարդկության ու քաղաքակրթության դեմ կատարած այս նոր հանցագործությունը, դաշնակից կառավարությունները Բարձր Դռանը հրապարակայնորեն ծանուցում են, որ իրենք պատասխանատվության են կանչելու թուրքական կառավարության յուրաքանչյուր անդամի, ինչպես նաեւ այն պաշտոնյաներին, որոնք մասնակցել են այդ կոտորածներին»:

Անդրադառնալով մինչեւ պատերազմի վերջը հույների տեղահանումներին՝ հեղինակը նախ վկայակոչում է ամերիկացի հայտնի դիվանագետ Հենրի Մորգենթաուի հուշերից մի հատված, որտեղ նկարագրված են հույն փոքրամասնության տառապանքները: «Հայերը Թուրքիայում նվաճված միակ ժողովուրդը չեն, որ տուժել են Թուրքիան բացարձակապես թուրքերի երկիր

դարձնելու քաղաքականությունից: Իրականում ազգայնացման այդ գաղափարի առաջին զոհերը հույներն են… Ըստ երևույթին, քանի որ քաղաքակիրթ աշխարհը նրանց տեղահանությունների դեմ աղմուկ չբարձրացրեց, թուրքերը որոշեցին նույն մեթոդները ավելի մեծ ծավալով կիրառել նաև հայերի, ասորիների, նեստորականների եւ թուրքահպատակ մյուս ժողովուրդների նկատմամբ»:

Առաջին հարվածները հասցվեցին Փոքր Ասիայի ծովափնյա հույներին, երկրորդ հարվածի տակ ընկան Թրակիայի, Մարմարա ծովի, Դարդանելի եւ Բոսֆորի, ինչպես նաեւ Սեւ ծովի ափերի հույները: Վերջիններիս հարյուր հազարներով քշեցին Փոքր Ասիայի խորքերը, կետ առ կետ օգտագործելով այն նույն եղանակները, որոնք գործադրել էին հայերի նկատմամբ: Մասնավորապես Պոնտոսի հույների կոտորածի եւ տեղահանության համար առիթ ծառայեց այն, որ ռուսական զորքը 1916թ. ապրիլին գրավեց Տրապիզոնը եւ շարժվեց դեպի արեւմուտք: Հույների արտաքսումները շարունակվեցին նույնիսկ 1917թ., երբ դեռ պատերազմը չէր ավարտվել:

Անտանտի զորքերի առաջխաղացումը իր նույն ազդեցությունն ունեցավ քրիստոնյաների մազապուրծ եղած մյուս բեկորների վրա: Այդ բեկորներից էին մասնավորապես Հաքյարիի եւ Վերին Միջագետքի ասորիները: Նրանց պարտադրեցին 500 կմ կտրելով վերադառնալ Համադան. 70.000 փախստականների մեկ երրորդը կոտորվեց սովից, համաճարակներից եւ քրդերի հարձակումներից: Իսկ արդեն պատերազմից հետո Թուրքիայում շատ քիչ նեստորականներ եւ քաղդեացիներ էին մնացել:

Գերմանական հրամանատարությունը 1918թ. մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանի հետ կնքեց իր համար ձեռնտու Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, ըստ որի Արեւմտյան Հայաստանի երկու մարզերը՝Կարսը եւ Արդահանը, ինչպես նաեւ Բաթումի շրջանը իրենց ապագան պետք է որոշեին հանրաքվեով: Անդրադառնալով այն հարցին, թե Բրեստ-Լիտովսկի համաձայնագիրը ինչ պայմաններ ընձեռեց թուրք եղեռնագործներին, Վ. Բաումը շատ յուրահատուկ մեկնաբանություն է տալիս: Բոլշեւիկյան Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ 1917թ. նոյեմբերի 30-ին կնքված զինադադարից հետո Տրապիզոնից մինչեւ Վան ընկած շրջանը պաշտոնապես դեռեւս ռուսական գրավյալ տարածք էր, սակայն քանի որ ռուս-թուրքական ճակատում ռուսական զորքերը կազմալուծվել էին, այն մնացել էր առանց ռազմական պաշտպանության: Օգտագործելով առիթը, փետրվարի 14-ին թուրքերը սկսեցին շարժվել դեպի Կարս, Արդահան եւ Բաթում: Բաումը նշում է, որ այդ առաջխաղացումը ամենուր ուղեկցվում էր հայ խաղաղ բնակչության կոտորածով: Թուրքերը շարունակեցին շարժվել Բաքու: Նրանք որոշեցին իրենց այդ ճանապարհին մի խոշոր զորամասով հարձակվել Երեւանի վրա եւ բնաջնջել հայ ժողովրդի արարատյան հատվածը՝ այնտեղ ապաստանած հարյուր հազարավոր արեւմտահայ գաղթականության հետ: Սակայն հայ ժողովրդի վերջին զինական կարողությամբ այդ ծրագիրը ձախողվեց, եւ միլիոնավոր զոհերի արյան գնով հռչակվեց Հայաստանի անկախ հանրապետությունը:

Բայց թուրքերը իրենց հիմնական ուժերով շարժվեցին Բաքու, որտեղ հասան սեպտեմբերի 14-ին: Այնտեղ կոտորվեց 30.000 հայ: Իթթիհաթի այդ վերջին ոճրագործությունից ընդամենը մեկ ամիս անց երիտթուրքական եռյակը, պարտության պատասխանատու ճանաչվելով, հայտարարվեց օրենքից դուրս: Նրա պարագլուխները երկրից փախան: 1919 թ. հուլիսին Էնվերը, Թալեաթն ու Ջեմալը այլ երիտթուրքերի հետ Սրամբուլում մահվան դատապարտվեցին հեռակա կարգով:

Երբ հաղթող երկրները պատրաստվում էին Թուրքիան բաժանել ազդեցության գոտիների, նախկին իթթիհատական, գեներալ Մուստաֆա Քեմալը Անատոլիայում իր շուրջը համախմբեց ազգայնամոլներին, կոչ արեց չճանաչել Անտանտի՝ սուլթանին պարտադրված պայմանները եւ կռվել դաշնակիցների հովանավորությամբ դեպի Անկարա շարժվող հունական զորքերի, ինչպես նաեւ, իհարկե, հայերի դեմ, որոնք անկախություն էին հռչակել: Այստեղ հետաքրքիր է Վ. Բաումի այն դիտարկումը, թե Քեմալը, Թուրքիայի աշխարհիկ հանրապետության հռչակողը, ինչպես է բնութագրել իսլամը որպես կրոն, այն կոչելով «անբարոյական բեդվինի անհեթեթ ուսմունք Աստծո մասին» եւ՝ «կյանքը թունավորող փտող դիակ»:

Այստեղ մեր կողմից ավելացնենք, որ Թուրքիայի աշխարհիկ հանրապետության հռչակումը եղավ քրիստոնյաների՝ հայերի, հույների, ասորիների՝ դարեր շարունակ հեղված արյան գնով, եւ թուրքական իսլամականությունը «փտող դիակ» դարձավ, քանի որ անվերջ սնվում էր ոչ թե սեփական աշխատանքի պտուղներով, այլ քրիստոնյա ժողովուրդների դիակներով: Եւ այսօր Թուրքիան, որպես աշխարհիկ երկիր, զարգանում է ոչ թե կրոնամոլ սուլթանների թողած պատգամների, այլ անմեղ զոհված քրիստոնյաների սուրբ մասունքների հիման վրա:

Վ. Բաումը 1915թ. իրադարձությունները նկարագրելիս վկայակոչում է բազում տվյալներ եւ փաստեր, թե տարբեր վայրերում ինչ դաժանությամբ որքան հայ բնակչություն տեղահանվեց, թալանվեց եւ մահվան բերան քշվեց: Միայն Դեր-Էս- Զորի ամենամեծ ճամբարում, որտեղ գետնից նավթ էր հորդում, 80.000 հայեր հեղձամահ եղան քարանձավներում, որոնք մինչեւ օրս կոչվում են « Խաբս- Էլ-Էրմեն» (Հայերի փոս):

Հատկանշական է, որ դեպքերին իրազեկ ոչ մի եւրոպացի քաղաքագետ, դիվանագետ եւ հասարակական գործիչ, որոնց վկայությունները բերում է Վ. Բաումը, նկատի ունենալով կոտորածների դաժանությունը, կասկած չի հայտնում, որ դա հայ քրիստոնեության բնաջնջումն էր:

Վ. Բաումը առանձին գլխով անդրադառնում է այն արձագանքներին, որոնք քրիստոնյաների կոտորածներն առաջացրին Արեւմուտքում: Որպես այդ արձագանքների բնորոշ օրինակ՝ նա վկայակոչում է Յ. Լեփսիուսի հայապաշտպան գործունեությունը:

Վ. Բաումը մի հետաքրքրական դիտարկում է անում, որ հայերի կոտորածների դեմ բողոքի ալիքը անգլոսաքսոնական երկրներում անհամեմատ ավելի լայն էր, քան Գերմանիայում, որը Թուրքիայի դաշնակիցն էր եւ որտեղ մամուլի գրաքննությունը շատ խիստ էր:

Վ. Բաումը վկայակոչում է մամուլի, դիվանագետների, հասարակական գործիչների անթիվ արձագանքներ, կառավարություններին հասցեագրված դիմումներ, բողոքագրեր, որոնց մեջ կոչ էր արվում սանձահարել ջարդարարներին, քրիստոնեական համերաշխություն հանդես բերել հայերի հետ: Սակայն դեպքերը զարգանում էին ճիշտ այն նույն ներքին տրամաբանությամբ, որով սկսվել էր առաջին համաշխարհային պատերազմը, այն է՝ աշխարհը վերաբաժանելու, տարածքներ եւ շուկաներ գրավելու, մեկը մյուսից ավելի խոշոր պատառ պոկելու տրամաբանությամբ: Ամփոփելով ջարդերի՝ Եւրոպայում առաջացրած արձագանքները, Բաումը գրում է, թե Անտանտը նախապես որոշակի տեսակետ չուներ, թե Հայաստանի ճակատագիրը ինչպիսին է լինելու պատերազմից հետո: Ճիշտ է, դաշնակից պետությունների ղեկավարները դատապարտում էին Թուրքիային, գրում է Վ. Բաումը, սակայն թուրքերին ուզում էին սոսկ պատժել նրանց գործած ոճիրի համար:

Իհարկէ, կային խոշոր երկրների ծրագրեր, որոնց հետ հայերը հույս էին կապում. ռուսներն ուզում էին ետ սպանալ 1878թ. գրաված եւ ապա կորցրած երեք հայկական նահանգները, մյուս նահանգները պետք է միացվեին Կիլիկիային, որպեսզի ելք սպանային Միջերկրական ծով: Այդ ծրագիրը իրականացվելու էր Ֆրանսիայի օժանդակությամբ եւ այսպես կոչված «Արեւելյան լեգեոնի» միջոցով, որը կազմված էր հայ կամավորներից:

Սակայն Ռուսաստանի Հոկտեմբերյան հեղափոխությունը հիմնովին փոխեց իրադրությունը Արեւելքում. Թուրքիայի հետ Ռուսաստանի ռազմաճակատի գիծը կազմալուծվեց, եւ տարբեր երկրներից հավաքված հայ կամավորները պետք է կռվեին հանուն ինքնավար ու ազատ Հայաստանի:

Թեեւ դաշնակիցները մինչ այդ անընդհատ խոսում էին հայերի ինքնավարության մասին, սակայն պատերազմից հետո խուսափեցին ճշգրիտ բնութագիր տալ այդ կարգավիճակին:

Տեղահանված հայերի մեծ մասը 1917-1918թթ. ոչնչացավ Իրաքի ու Սիրիայի անապատներում: Ըստ Լեփսիուսի, ինչպես նաեւ Հայոց պատրիարքության տվյալների՝ Օսմանյան կայսրության հպատակ մեկ միլիոն 845 հազար 450 հայերից 244 հազարը փախավ Կովկաս եւ Եգիպտոս: Տեղահանվեց մոտ մեկ միլիոն 400.000 հայ, որից ավելի քան մեկ միլիոնը զոհվեց: Սվեն Հեդինը 1918թ. Լայպցիգում տպագրված իր գրքում զոհերի թիվը տալիս է կես միլիոն, թուրքական քարոզչությունը մինչեւ օրս էլ վկայակոչում է այդ թիվը: Բրիտանական հանրագիտարանը եւս այդ թիվն է տալիս:

Մուստաֆա Քեմալը եւ նրա շրջապատը ի լուր Եւրոպայի դիվանագետների հայտարարում էին, որ իրենք զավթողական ծրագրեր չունեն եւ ոչ մուսուլման բնակչությանն ընդունում են թուրքերի հետ հավասար իրավունքներով: «Մենք երաշխավորում ենք, որ հայերի նկատմամբ թուրքական դաժանություններ չեն լինելու» - հայտարարեց Քեմալը: Վ. Բաումը այս կապակցությամբ նկատում է, որ քեմալականները նման հայտարարություններով նպատակ ունեին հաշտության փարիզյան մոտալուտ խորհրդաժողովը տրամադրել ի նպաստ իրենց:

Կատարելապես իշխանազուրկ սուլթանը, որը Քեմալին նշանակել էր ռազմական տեսուչ, նրան պաշտոնանկ արեց, հայտարարելով, թե նա ապստամբ է:

Եւ Քեմալը իրոք ապստամբ էր, քանզի, ի տարբերություն սուլթանի, չէր ուզում կատարել հաղթող երկրների կամքը:

Նա ամենեւին չէր ժխտում քրիստոնյա փոքրամասնությունների դեմ գործված ոճիրը եւ 1919թ. վերջերին Ամասիայում նույնիսկ հրապարակայնորեն դատապարտեց իթթիհաթականներին, պահանջելով պատժել նրանց, սակայն շեշտում էր, որ չի կարելի ամբողջ ազգին պատասխանատու դարձնել մի բանի համար, որը սոսկ մի քանիսի մեղքն էր:

Այդպիսով, նա պատասխանատու սուբյեկտ էր դարձնում միայն երիտթուրքերին, իսկ թուրք ժողովրդին, որը ոճիրը իրականացնող հիմնական ուժն էր, հանցագործից դարձնում էր զոհ:

Անտանտի համաձայնությամբ հույները 1919թ. մայիսին գրավեցին հիմնականում հույներով բնակեցված Զմյուռնիան: Նրանք 1921թ. ամռանը մոտեցան Անկարային: Սակայն Քեմալը այդ ընթացքում կարողացավ համախմբել ազգայնամոլական ուժերը, մերձենալ բոլշեւիկների հետ եւ նրանց տրամադրած նյութական օժանդակությամբ բարելավել իր բանակի սպառազինությունը:

Բոլոր ծրագրերի, դիրքորոշումների, շահերի բախման արդյունքում 1920թ.

օգոստոսի 10-ին Սեւրում կնքվեց հաշտության պայմանագիրը, որով ճանաչվում էր Հայաստանի անկախությունը. նախատեսվում էր, որ արեւելյան նահագներն անցնելու են Հայաստանին: Սակայն ԱՄՆ նախագահ Վիլսոնը շատ ուշացրեց անկախ Հայաստանի սահմանների հաստատումը: Մինչդեռ իրադարձությունները այլ ընթացք ունեցան:

Վ. Բաումը գրեթե ամեն պարբերության մեջ ներկայացնելով իրադրության մի նոր փոփոխություն, հաղորդելով նորանոր, հաճախ իրարամեժ փաստեր, այդուհանդերձ իրադարձությունների համապատկերի վրա ուրվագծում է պատմական իրողության ընդհանուր զարգացումը: Պատմական Հայաստանի տարածքից 42.000 քառ.կմ անցնելու էր Հայաստանի Հանրապետությանը: Այդպիսով Հայաստանը կունենար 68.500 քառ.կմ տարածք: Սակայն Հայաստանը բավարար զենք եւ զորք չուներ այդ տարածքը պաշտպանելու համար, իսկ Թուրքիայից Հայաստանին անցնելիք տարածքում տեղաբաշխված էր չորս թուրքական հետեւակային գումարտակ՝ հարուստ ռազմամթերքով: Բացի այդ, քեմալականների եւ բոլշեւիկների հնարավոր համագործակցությունը անկախ Հայաստանը վերացնելու ուղղությամբ սպառնալից բնույթ էր կրում:

Անգլիայի գլխավոր շտաբը հայտարարեց, թե Սեւրի պայմանագրին հավանություն կտա միայն այն դեպքում, եթե Հայաստանում ապահովվի անհրաժեշտ թվաքանակով զորք:

Իր հերթին Քեմալի կառավարությունը պայմանագիրը չճանաչեց, ավելին 1920թ. սեպտեմբերի վերջին հարձակվեց Հայաստանի նորակազմ պետության վրա:

Այստեղ հարկավոր է մեր կողմից նշել, որ քեմալական Թուրքիայի ազգային ժողովում Հայաստանի դեմ պատերազմը հայտարարվել է երկար բանավեճերից հետո, մեծ երկյուղով, քանի որ Հունաստանի բանակը նույն թվականի հունիսի վերջին դուրս էր եկել Իզմիրից եւ շարժվում էր դեպի Անկարա: Ամեն ինչ ցույց էր տալիս, որ այստեղ որոշակի գործարք կար քեմալականների եւ բոլշեւիկների միջեւ, ըստ որի Թուրքիան արեւմուտքում պետք է գրավեր Ղարսը, Արդահանը, Ալեքսանդրապոլը, իսկ բոլշեւիկյան 11-րդ բանակը պետք է անկախ Հայաստանի վրա հարձակվեր արեւելքից՝ բոլշեւիկացած Ադրբեջանից:

Այդպես էլ եղավ՝գրեթե միաժամանակ արեւմուտքից քեմալականները, արեւելքից՝ բոլշեւիկները հարձակվեցին նորանկախ երկրի վրա: Հայաստանի կառավարությունը, այլ ելք չունենալով, 1920թ. դեկտեմբերի 2-ին զինադադար կնքեց քեմալականների հետ՝ իշխանությունը հանձնելով բոլշեւիկներին: Այդ գործարքով Կարսը եւ Արդահանը որպես գին վճարվեցին Թուրքիային: Հայաստանին մնում էր սգալ նոր զոհերին, քանզի Ալեքսանդրապոլում սպանվածների թիվը հասնում էր 60 հազարի, վիրավորներինը՝18.000, գերի էր ընկել 18.000 մարդ:

Իսկ բուն Թուրքիայում քեմալականները 1922թ. վերջերին, ոչ առանց բոլշեւիկների աջակցության, պարտության մատնեցին հույներին:

Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքները վերջնականապես ամփոփվեցին 1923թ. Լոզանի հաշտության պայմանագրով:

Թուրքերը Լոզանում արդեն բոլշեւիկների կարիքը չունեին: Արեւմտյան տերությունները հաշտության խորհրդաժողովում թուրքերին դարձյալ դատապարտեցին քրիստոնյաների զանգվածային կոտորածների համար, սակայն Թուրքիան Եւրոպայի կողմից արդեն դիտվում էր որպես պատվար բոլշեւիկյան Ռուսաստանի դեմ:

Լոզանի պայմանագրով թեեւ երաշխավորում էր կրոնական ազատությունը, սակայն ասորիները պարզորոշ կերպով չէին հիշատակվում: Դաշտպանության տակ էին առնվում նաեւ քրիստոնեական եկեղեցիները: Դայմանագրի ընձեռած իրավունքներից կարող էին օգտվել հույները, հայերը եւ հրեաները: Լոզանի պայմանագրի կնքմանը հաջորդեց հույների նոր գաղթը Պոնտոսից, Տրապիզոնից եւ պատմական Կապադովկիայից: Ասորիների պատրիարքը որոշեց, որ նորաստեղծ Թուրքիայում ասորիների համար ավելի լավ է ապրել որպես սովորական քաղաքացի, քան թե աչքի ընկնել որպես կրոնական համայնք եւ վտանգի ենթարկվել:

Վ. Բաումն ահա այսպես է ներկայացնում Արեւելյան քրիստոնեության եւ նրա կրողների մայրամուտը Թուրքիայում:

Քեմալ Աթաթուրքի հիմնադրած աշխարհիկ հանրապետությունը Ասիայում թուրք ցեղի առաջնության տեսությամբ ռասիստական եւ ավտորիտար համակարգ էր իր բոլոր արդիականացումներով հանդերձ, գրում է Վ. Բաումը:

Քեմալական հեղափոխությունից հետո Թուրքիայում հունական եւ հայկական պատրիարքությունները պահպանվեցին: Կոտորածներից մազապուրծ եղած հույների եւ հայերի թիվը սկսեց նվազել. այսպես, 1922թ. Սմիրնայում դեռեւս ապրում էր 280.000 հույն, սակայն հետագայում նրանցից միայն 111.200 հոգի ստացավ մշտական բնակության իրավունք, մնացածներին հարկադրեցին գաղթել Հունաստան:

1955թ. հարձակումներ տեղի ունեցան հույների դեմ, որոնք խմբերով լքեցին երկիրը: Այդ օրերին ավերվեցին տասնյակ եկեղեցիներ, 26 հունական եւ 98 հայկական դպրոցներ, քրիստոնյաներին պատկանող բազմաթիվ հաստատություններ, նյութական վնասը կազմեց մինչեւ 360 միլիոն դոլար:

1963թ. Կիպրոսի ճգնաժամի հետեւանքով թուրք-հունական հարաբերությունները դարձյալ սրվեցին, 12.000 հույն արտաքսվեց պետական դավաճանության շինծու մեղադրանքով: Այսօր Թուրքիայում ապրում է ընդամենը 3.500 հույն, մեծ մասամբ Սմիրնայում:

Ներկայումս Թուրքիայում փոքր համայնք են կազմում նաեւ հայերը, գրում է Վ. Բաումը: Հայոց պատրիարքարանն ունի 35 եկեղեցի, իսկ հայ բնակչության թիվը պաշտոնապես 70.000 է: Հայ Առաքելական Եկեղեցին 1903թ. ուներ 1000 դպրոց, այսօր գործում է ընդամենը 21-ը: Վ. Բաումը, բերելով իր աղբյուրներից քաղված տվյալները, նշում է, թե նախկին հայկական բնակավայրերում պետք է որ դեռ մնացած լինեն 150.000 հայեր, որոնք սակայն, երկյուղելով իշխանությունների բռնություններից եւ մոլեռանդ մուսուլման թուրքերի սանդրանքներից, իրենց ազգային պատկանելությունը չեն խոստովանում:

Ասորի քրիստոնյաների մեծ մասը 1922-24թթ. գաղթեց Սիրիա: Նույն տարիներին քրիստոնյաների վերջին բեկորները հեռացան Եդեսիայից, որտեղ հայոց Մայր Տաճարը սկզբում վերածվեց հրշեջ կայանի, ապա մզկիթի: 1923թ. քրդերը, չստանալով իրենց սպասած ինքնավարությունը, խռովություն բարձրացրին Մարաբդինում, որտեղից ասորի քրիստոնյաների մի մասը տեղափոխվեց Սմիրնայ, որտեղ նրանց թիվն այսօր կազմում է 10.000: Եւս 10.000 ասորիներ ապրում են Թուրքիայի այլ վայրերում, որտեղ հայտնի են «այուրանի» անվամբ:

Մենք փորձեցինք Վ. Բաումի ուսումնասիրած հարյուրավոր փաստերը ներկայացնել ընտրովի՝ հիմնական պատմական փուլերի հետ կապված: Վերջում մեջբերենք հեղինակի խոսքը Թուրքիայի՝ Եւրամիությանը անդամակցելու խնդրի կապակցությամբ:

«Մնում է հուսալ, որ եւրոպական պետությունները ոչ միայն կստորադասեն իրենց տնտեսական ու ռազմական շահերը, այլեւ թուրքերից բացատրություն կպահանջեն հույն, հայ եւ ասորի քրիստոնյաների կոտորածների համար:

Եւրոպայի համար անփոխարինելի արժեքներ են կրոնի, ժողովների եւ կարծիքների անսահմանափակ ազատությունը, նյութական օժանդակությունը դպրոցներին, միջազգային հետազոտությունների համար բոլոր արխիվների մատչելիությունը, եկեղեցական–մշակութային թալանված ունեցվածքի վերադարձումը եւ պաշտպանությունը (սրբազան սպասք, ձեռագրեր ու գրադարաններ ունենալու՝ կաղաստրում ամրագրված իրավունքը), ինչպես նաեւ ազգային փոքրամասնությունների համապարփակ պաշտպանությունը: Եւրոպան սխալ կվարվեր, եթե շեղումներ կատարեր իր քաղաքակրթական դիրքերից: Եւրոպացիների հրապարակային բանավեճը Թուրքիայի հետ կարող է սկսվել»:

Գրքում զետեղված են նաեւ Սեւրի եւ Լոզանի հաշտության պայմանագրերի այն հոդվածները, որոնք վերաբերում են Հայաստանին:

Թուրքական պետությունը մինչեւ օրս էլ շարունակում է զանազան օրենքներով սահմանափակել քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքները, մասնավորապես կրոնական ազատությունը: Օրինակ՝ քրիստոնյաներին պետական ծառայության չեն ընդունում, լինում են դեպքեր, երբ նրանց արգելվում է աղոթել եկեղեցիներում, ճնշվում է հոգեւոր կրթություն ստանալու իրավունքը:

Վերջերս փվյալ իրողության ապացույցը եղավ այն, որ Ամերիկայի Միացյալ նահանգների Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում քննարկվեց Պետական դեպարտամենտի զանձապետական հատկացումները կարգավորող «Վավերացման ակտ»-ի 808 կետում փոփոխություններ կատարելու հարցը: Նախքան քվեարկությունը, շատ կոնգրեսականներ իրենց ելույթներում քննադատեցին ազգային եւ կրոնական հողի վրա սեփական քաղաքացիներին խտրականության ենթարկելու՝ թուրքական պետության այդ քաղաքականությունը, որն այսօրվա աշխարհում մի աղաղակող ժամանակավրեպություն է: Ընդ որում նշվեց, որ հետապնդվում է ինչպես փոքրամասնությունների կրոնական կազմակերպությունների գործունեությունը, այնպես էլ անհատ քրիստոնյաների քաղաքացիական իրավունքը:

Մասնավորապես կոնգրեսական Ք. Սմիթը ընդգծեց, որ Թուրքիան տարիներ ի վեր հակաժողովրդավարական օրենքներ է օգտագործում Հայ Առաքելական, Հույն Ուղղափառ եւ Ասորական եկեղեցիների, հրեական համայնքի սրբավայրերը եւ սեփականությունը յուրացնելու համար: Թուրքիայի գերագույն դատարանը հենց այս տարի ընդունեց մի օրենք, համաձայն որի չորրորդ դարի սիրիական հնագույն վանական համալիրը որպես սեփականություն փոխանցվել է պետությանը:

Առաջարկված փոփոխություններն ընդունվեցին ձայների 43 կողմ եւ 1 դեմ հարաբերակցությամբ: Այդ փոփոխություններով Ամերիկայի Միացյալ նահանգները Թուրքիային կոչ է անում հարգել մարդու ազատությունները, մասնավորապես էկումենիկ եկեղեցու՝ սեփականություն ունենալու իրավունքը: Փաստաթղթերում նշվում է, որ հոգեւոր կրթություն ստանալու իրավունք ունեն ոչ միայն թուրք քաղաքացիները, այլեւ մյուս ազգությունների ներկայացուցիչները:

Նման քաղաքականությունը ոչ միայն սահմանափակում է Թուրքիայում դեռեւս պահպանված քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքները, այլեւ նույնիսկ վտանգ է սպառնում նրանց բուն իսկ գոյությանը:

Կոնգրեսականների ելույթները եւ փոփոխությունների քվեարկության

արդյունքը փաստացի վկայություն եղան այն բանի, որ Ամերիկայի Միացյալ նահանգները օրինակ է պալիս կրոնական ազատությունը դարձնելու իր ինքնության անբաժանելի մասը:

Կարելի է ասել, որ ներկայացուցիչների պալատի ընդունած փաստաթղթով միաժամանակ նաեւ եւրամիությանն անուղղակիորեն կոչ է արվում Թուրքիային այդպիսի պատմական գերծանր բեռով չընդունել եւրոպական երկրների շարքը, մանավանդ, եթե նկատի առնենք, որ այդ երկրների միացյալ Պառլամենտը ճանաչել է Հայոց Ցեղասպանությունը:

ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ